Արձանագրություն N 4

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «Հուլիս» 2023թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ե. Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ	Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Ա.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

Բացակայում էր՝ Հ. Խուրշուդյանը

1. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ե. Էլիբեկյան)

28.06.2023թ. հայտերի գնահատումը կասեցվել էր՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

30.06.2023թ. դրությամբ՝ սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին բոլոր ծանուցված մասնակիցների կողմից համակարգում ներբեռնված շտկված փաստաթղթերը:

Որոշվեց. Բոլոր շտկումներ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ե. Էլիբեկյան)

13.06.2023թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ե. Էլիբեկյան)

06.06.2023թ. ժամը 20:29-ին հրավերի վերաբերյալ ներկայացվել է հարցում, որին գնահատող հանձնաժողովի կողմից 08.06.2023թ. էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացվել է պարզաբանում և նշված պարզաբանման տրամադրման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ե. Էլիբեկյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն՝ 1, 9, 11, 24, 32, 33, 39 և 40-րդ չափաբաժինների մասով՝ 18,258,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Սիուն» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ 9,240,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Աննարկա» ՍՊԸ-ն՝ 3-րդ և 23-րդ չափաբաժինների մասով՝ 10,150,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով՝ 1,600,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Դելտա» ՍՊԸ-ն՝ 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով՝ 2,499,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ 2,500,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Լինարե» ՍՊԸ-ն՝ 8, 10, 12, 13, 14-դ և 30-րդ չափաբաժինների մասով՝ 6,703,200 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Երմեդ» ՍՊԸ-ն՝ 17, 21, 22, 31, 34, 35, 36-րդ և 38-դ չափաբաժինների մասով՝ 12,880,175 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 18-րդ չափաբաժնի մասով՝ 3,024,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն՝ 19-րդ չափաբաժնի մասով՝ 9,980,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն՝ 20, 27, 28, 29, 37-րդ և 42-րդ չափաբաժինների մասով՝ 16,186,200 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Էյէյ Ինժեներինգ» ՍՊԸ-ն՝ 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով՝ 2,200,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն՝ 45-րդ չափաբաժնի մասով՝ 7,031,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Մերժել ոչ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ըստ չափաբաժինների՝ ներկայացված գնային առաջարկները գնման գները գերազանցելու պատճառով՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ մասի:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած

- 15-րդ, 16-րդ, 41-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ մասը:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 08.07.2023թ.-ից մինչև 17.07.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

---------- Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան